ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7. 1957 Общественные науки

Ս. Մ՝իքայելյան

ԸՍՏ ՀՈՂԻ ԲԱՇԽՎՈՂ ԵԿԱՄՏԻ (ՌԵՆՏԱՅԻ) ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ժողովրդա-դեմոկրատական ռեսպուբլիկաներում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը սկսվել է հողի մասնավոր սեփականության իրավունքի պահպանման պայմաններում։ Դա ժողովրդա-դեմոկրատական երկրների սոցիալիստական շինարարության բնորոշ առանձնահատկություններից մեկն է, որով նրանք տարբերվում են Սովետական Միությունից, ուր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը սկսվել է ամբողջ հողի ազգայնացման առկայության պայմաններում։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման այս առանձնահատկությունը կապված է ժողովրդա-դեմոկրատական երկրների ագրարային հարաբերությունների պատմական զարգացման յուրահատկության հետ, որի պայմաններում պետք է գործնականորեն լուծվեն բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի և սոցիալիզմի կառուցման հարցերը։

Վ. Ի. Լենինը ուսուցանում էր, թե այնտեղ, որտեղ ուժեղ է հողի մասնավոր սեփականության տրադիցիան — իսկ բանը հենց այդպես էր ժողովրդական դեմոկրատիայի եվրոպական երկրներում — գյուղացիական մասսաները միանգամից չեն ընկալի ամբողջ հողի ազգայնացման պահանջը։

Ելնելով Լենինի այս դրույթից[1], ինչպես և հաշվի առնելով 1919 թ հունգարական Սովետական Ռեսպուբլիկայի պարտության դասերը, Եվրոպայի ժողովրդա-դեմոկրատական երկրների կոմունիստական ու բանվորական պարտիաները առաջադրել են ոչ թե ամբողջ հողի ազգայնացման, այլ հողի բաժանքի պահանջը՝ «Հողը պետք է պատկանի նրան, ով այն մշակում է» սկզբունքի հիման վրա։

Հողի մասնավոր սեփականության իրավունքի պահպանումը գյուղատընտեսական կոոպերատիվ տնտեսությունների բազմաթիվ տիպերում առաջացնում է եկամտի որոշ մասը ըստ հողի բաշխելու անհրաժեշտությունը։ Թե ինչպիսի բնույթ ունի ըստ հողի բաշխվող եկամուտը, ինչպիսի հարաբերություններ են նրանով պայմանավորվում, որն է նրա հեռանկարը և դրանց հետ կապված հարցերը, թեորիական ու գործնական հետաքրքրություն են ներկայացնում։

Մեր հոդվածում այդ խնդիրները քննարկվում են Բուլգարիայի Ժողովրդական Ռեսպուբլիկայի օրինակով, որտեղ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումն իրականացվում է աշխատանքային կոոպերատիվ հողագործական տնտեսությունների (ԱԿՀՏ-ների) ձևով։

---

[1] *Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 180—181։*

ԱԿՀՏ են մտնում ոչ միայն հող ունեցող, այլև հողազուրկ գյուղացիները, որոնք 1946 թ. ագրարային ռեֆորմից հետո էլ հող չստացան պետական հողային ֆոնդի նվազ չափերի հետևանքով։

ԱԿՀՏ մտնող գյուղացիները օրինակելի կանոնադրության համաձայն հանձնում են կոոպերատիվ տնտեսությանը իրենց հողը ընդհանուր օգտագործման համար (բացի տնամերձ տնտեսության համար թողնվող 0,2-ից մինչև 0,5 հեկտար հողը), միավորում հողը կոոպերատիվ մասսիվների մեջ, վերացնում սահմանները, պահպանելով, սակայն, հողի մասնավոր սեփականության իրենց իրավունքը։

Հողի մասնավոր սեփականության իրավունքը տնտեսապես իրացվում է այն բանի մեջ, որ ԱԿՀՏ-ների եկամտի որոշ մասը, որը Բուլղարիայում կրում է ռենտա անունը, բաշխվում է ըստ հողի չափի։

Ի՞նչ բան է ռենտան, որն է նրա աղբյուրը, ինչպիսի՞ն է նրա բնույթը։ Այս հարցերը քիչ վեճերի տեղիք չեն տվել։ Ամենատարբեր կարծիքներ են արտահայտվել։ Ոմանք ռենտան համարում էին կապիտալիստական տարր ԱԿՀՏ-ում[1], մյուսները նրանում տեսնում էին դասակարգային անտագոնիզմի արտացոլումը կուլակի և գյուղական չքավորության միջև։ Այսպես, օրինակ, Ե. Մատեևը գրում էր՝ «ԱԿՀՏ-ում անտագոնիստական հարաբերությունները կուլակի և գյուղական չքավորության միջև վերացված չեն, այլ միայն կերպափոխված են և նույնիսկ սրված»[2]։ Պնդում էին, թե ԱԿՀՏ-ում տեղի ունի շահագործում, ստեղծվում է հավելյալ արժեք։ Ռենտան հայտարարում էին անաշխատ եկամուտ և դրա հիման վրա եզրակացնում անտագոնիզմի և հակասությունների մասին ԱԿՀՏ-ի անդամների միջև։ Այս պնդումները, սակայն, կամ սխալ են, կամ հարցը քննարկում են միակողմանի, ուստի և անխուսափելիորեն հանգեցնում են սխալ հետևությունների։

Ռենտան ԱԿՀՏ-ում վարձ է հողի՝ որպես արտադրության միջոցի համար։ Այդ ըստ էության հողային վարձ է, որն արտահայտում է արտադրական կոլեկտիվի անդամների հարաբերությունը հողի՝ որպես արտադրության միջոցներից մեկի մասնավոր սեփականության առկայության դեպքում։ ԱԿՀՏ-ը միավորում է աշխատավորական տնտեսություններ, որոնք կապիտալիստական տարր չեն պարունակել մինչև միավորվելը։ Կապիտալիստական տարրեր չէին կարող առաջանալ աշխատավորական տնտեսությունները աշտարակական կոոպերացիայի մեջ միավորելուց ժողովրդա-դեմոկրատական կարգերի պայմաններում, որը պրոլետարիատի դիկտատուրայի ձև է։ Նույնչափ սխալ է հողի բաժինը դիտել որպես անտագոնիստական հարաբերությունների արտահայտություն կուլակի և գյուղական չքավորության միջև, որոնք իբրև թե կերպափոխվել ու նույնիսկ սրվել են։ Մինչև օրինակելի կանոնադրության ընդունելը (1950 թ.) կուլակներին, իբրև կանոն, ԱԿՀՏ չէին ընդունում։ Ռենտան ներկայացնել իբրև անտագոնիզմի կերպափոխված արտահայտություն կուլակի և գյուղական չքավորության միջև, նշանակում է կուլակից չտարբերել միջակ ու չքավոր գյուղացուն, որոնք ռենտա են ստանում ԱԿՀՏ-ին հանձնած իրենց հողի համար։

---

[1] Տե՛ս Մ. Ռուսեենովի հոդվածը, „Народостопански архив", Свиштов, 1950, кн. I, էջ 84—85։

[2] „Ново време", София, 1948, № 10, էջ 867։

Որևէ հիմքից զուրկ են ԱԿՀՏ-ում հավելյալ արժեք լինելու մասին եղած պնդումները։ Նման պնդումների հեղինակները աչքախող են անում այն կարևոր հանգամանքը, որ աշխատանքային հողային սեփականության մասին օրենքի (1946 թ.) հիման վրա հողը ստացել է ընտանիքի գլուխը, նա էլ հենց հանձնում է այդ հողը ԱԿՀՏ-ին։ Մինչդեռ ԱԿՀՏ-ի անդամ են դառնում ոչ միայն ընտանիքի գլուխը, այլև ընտանիքի 16 տարեկանից բարձր բոլոր անդամները, որոնք մասնակցում են կոոպերատիվ տնտեսության աշխատանքին և օգտվում տնտեսության անդամի բոլոր իրավունքներից։ Դրանից հետևում է, որ ԱԿՀՏ-ի՝ ընտանիքի գլուխ անդամը ռենտայի ձևով ստանում է նաև իր ընտանիքի անդամների աշխատանքի արդյունքից։ Ընտանիքի գլխի և ընտանիքի անդամների միջև եղած հարաբերությունները շահագործման հարաբերություններ չեն եղել մենատնտեսության պայմաններում, նրանք այդպիսին չեն կարող դառնալ նաև ԱԿՀՏ-ի պայմաններում։

Երկրի պայմաններին համեմատ, մարքսիզմ-լենինիզմի ստեղծագործական զարգացման հիման վրա Բուլգարական կոմունիստական պարտիայի կատարած հսկայական բացատրական աշխատանքի շնորհիվ վերը հիշատակված սխալ պատկերացումները հիմնականում հաղթահարված են։

Հող ունեցող կոոպերատորների (ԱԿՀՏ-ի անդամների) եկամուտը գոյանում է ըստ աշխատանքի և ըստ հողի ստացած արդյունքից։ Կոոպերատորների ընդհանուր աշխատանքով ստեղծված արդյունքի մի մասն է, որ առանձնացվում է ըստ հողի բաշխելու համար։ Ինքնին հասկանալի է, որ կոոպերատորի վաստակած աշխօրերի քանակը որոշ մակարդակից գերազանցելուց հետո եկամուտի չափը իջնում է, քանի որ նրանից հանվող եկամտի մասն ավելի մեծ է լինում, քան ըստ հողի նրան վերադարձվող մասը։ Հետևաբար կոոպերատորների միայն այն խավն է շահում ռենտայից, որը տվյալ ԱԿՀՏ-ի համար միջինից ավելի հող է հանձնել ու միջինից պակաս աշխօրեր վաստակել։ Ռենտա ստանալու մեջ շահագրգռված և ռենտայի գոյության մեջ չշահագրգռված կոոպերատորների միջև հակասություն գոյություն ունի։ Այս մասին քիչ չի գրվել ու գրվում բուլգարական գրականության մեջ։ Դա վերջին հաշվով հակասություն է միջակ ու չքավոր գյուղացիության միջև։ Նրանց միջև եղած հարաբերությունները անտագոնիստական չեն եղել կապիտալիզմի ժամանակ, նրանք անտագոնիստական չէին կարող դառնալ ժողովրդա-դեմոկրատական կարգի պայմաններում, առավել ևս նրանց ԱԿՀՏ-ներում կամավոր կերպով միավորվելու դեպքում։ ԱԿՀՏ-ը ավելի է մերձեցնում գյուղացիության չքավորա-միջակ խավերին, բարենպաստ պայմաններ ստեղծում նախկին բատրակների ու չքավորների կենսամակարդակը բարձրացնելու համար։ Տարեց տարի ավելի ու ավելի են վերանում նախկին միջակների ու չքավորների միջև եղած տարբերությունները։ Նրանք հավասարապես շահագրգռված են ԱԿՀՏ-ի ամրապնդման մեջ, տնտեսության աշխատատար պրոցեսները մեքենայացնելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու և ԱԿՀՏ-ի եկամուտները ավելացնելու մեջ։ ԱԿՀՏ-ներում միավորված չքավորա-միջակային գյուղացիությունը դառնում է ժողովրդա-դեմոկրատական կարգի ամուր հենարանը։

Հետևաբար, կոոպերատորների շահերի ընդհանրությունը տարբեր չափերի հող հանձնելու առկայության դեպքում գերիշխում է նրանց միջև

եղած հակասությունների նկատմամբ։ Ուստի և չի կարելի ճիշտ համարել, երբ ԱԿՀՏ-ների տնտեսական կարգի հետ կապված հարցերը քննարկելիս շեշտվում են կոոպերատորների միջև եղած հակասությունները և հարկավոր չափով չի բացահայտվում նրանց շահերի ընդհանրությունը, որը վճռական նշանակություն ունի ԱԿՀՏ-ի կյանքի համար։ Կոոպերատորների շահերի ընդհանրությունը իր արտացոլումն է գտնում կոոպերատորների կամավոր որոշումներով ռենտայի չափի հետևողական նվազման մեջ։ Մինչև 1950 թ. ապրիլը—ԱԿՀՏ-ի օրինակելի կանոնադրության ընդունելը— ռենտան կազմել է կոոպերատորների միջև բաշխման ենթակա եկամտի 45 տոկոսը։ Օրինակելի կանոնադրությունը նվազեցրել է այն և սահմանել մինչև 30 տոկոսը, իսկ ԱԿՀՏ-ների ներկայացուցիչների III կոնֆերենցիան (1953 թ. դեկտեմբեր) թույլատրելի է համարել ըստ հողի բաժանել եկամուտների մինչև 25 տոկոսը։ Այսպես օրինականացվել է այն, ինչ գործնականորեն արդեն կատարված է եղել ԱԿՀՏ-ներում։ 1952 թ. վերջում ռենտայի բաժինը երկրի մասշտաբով կազմել է բաշխվող եկամուտների 20 տոկոսը, 1953 թ.—15, 1954 թ.—11, իսկ 1955 թ.—9,8 տոկոսը. 22 ԱԿՀՏ-ներում կոոպերատորների կամավոր որոշումով ռենտան վերացված էր և եկամուտները բաշխվում էին միայն ըստ աշխատանքի։ Այսպիսի ԱԿՀՏ-ների քանակը գնալով անկասկած ավելանալու է։ Բուլղարական կոմունիստական պարտիան և Բուլղարիայի կառավարությունը շտապողականություն չեն ցուցաբերում այս հարցում, ելնելով այն պարզ ճշմարտությունից, որ մասնավոր սեփականության բնագդով համակված գյուղացիությունը իր սեփական փորձով պետք է համոզվի, որ ԱԿՀՏ-ների եկամուտի աճումը կախված է ոչ թե հողից, այլ ժամանակի միավորի ընթացքում կատարած աշխատանքի քանակից, կոոպերատորների հմտության աստիճանից, Նրանց ագրո ու զոոգիտելիքների մակարդակից, գործադրվող աշխատամիջոցների ու պարարտանյութերի քանակից ու էֆեկտիվությունից, գյուղատնտեսական արտադրության աշխատատար պրոցեսների մեքենայացման բնույթից ու աստիճանից, ագրոնոմիական գիտության զարգացման աստիճանից ու նրա հետևանքների պրակտիկ կիրառումից և, վերջապես, հասարակական աշխատանքի կազմակերպման բնույթից, արտադրական հարաբերությունների բնույթից։ Հողը աշխատանքի կիրառման բնական պայմանն է։ Անգամ հողի բերքատվությունը, ինչպես ցույց է տվել Մարքսը, բնության պարգևը չէ, այլ մեծապես կախված է հասարակական կարգից։ Բայմաթիվ ԱԿՀՏ-ներում հողային տարածության առանձին փոփոխություններ տեղի չեն ունեցել, կամ աննշան աճ է կատարվել, սակայն ԱԿՀՏ-ները ձեռք են բերել զգալի նվաճումներ ինչպես անրաժանելի ֆոնդերի աճման, այնպես և կոոպերատորների նյութական կենսամակարդակի բարձրացման գործում։

Բուլղարական կոմունիստական պարտիան ու Բուլղարիայի կառավարությունը օգնում են կոոպերատորներին իրենց իսկ կամավոր որոշումներով նվազեցնելու և այնուհետև վերացնելու ռենտան։

Որքան տնտեսապես ու կազմակերպորեն ավելի ամրապնդվեն ԱԿՀՏ-ները, որքան ավելի նրանք դառնան բազմաճյուղային տնտեսություններ բարձր եկամտաբերությամբ ու ապրանքայնությամբ, որքան ավելի էժանանա ԱԿՀՏ-ի արտադրությունն ու բարձրանա կոոպերատորների նյութական շահագրգռվածությունը և ապահովվի կոոպերատորների ավելի լայն

աշխատանքային ներգրավումը հասարակական տնտեսության մեջ, այնքան ավելի պայմաններ կստեղծվեն ռենտան կամավոր կերպով վերացնելու համար։ Որոշ իմաստով ռենտայի վերացման արգելակող գործոն է հանդիսանում հողը վարձակալելու իրավունքի գոյությունը, որի ազդեցությունը դնալով թուլանում է գյուղական տնտեսությունների կոոպերացման կորագծի բարձրացման հետևանքով։ Գյուղական բոլոր տնտեսությունների կոոպերացման լիակատար ավարտումը կամավորության սկզբունքի հիման վրա անկասկած կարագացնի ռենտայի վերացումը։

Եթե այն սխալ տեսակետը, թե ռենտան շահագործման հարաբերությունների արտահայտման ձև է, հավելյալ արժեքի մի մաս, հաղթահարված է, ապա դեռ լայն տարածում ունի այն կարծիքը, թե հողի համար տրվող հատուցումը բացարձակ ռենտա է։ Այսպես, օրինակ, գրում էին. «ԱԿՀՏ-ում... պահպանված է մասնավոր սեփականությունը և դրան համապատասխանաբար գոյություն ունի բացարձակ հողային ռենտա»[1]։ «Մասնավոր սեփականության գոյությունը հենց պայմանավորում է անաշխատ եկամտի, այսինքն ռենտայի ստացումը։ Դա բացարձակ ռենտա է։ Դա հետևանք է հողի մասնավոր սեփականության իրավունքի»[2]։ Ռենտան համարում էին կապիտալիստական ըստ բովանդակության, որը ստերիլ բնույթ է ստանում այն բանի շնորհիվ, որ ռենտան չի որոշվում շահույթի միջին նորմայով, այլ պետության կամքով և ԱԿՀՏ-ի անդամների ընդհանուր ժողովի որոշումով[3]։ Պնդում էին, թե գոյություն ունի կերպափոխված բացարձակ ռենտա[4]։ Ն. Զերնոկոլևը գրում էր. «Բացարձակ ռենտան կապված է հողի մասնավոր սեփականության հետ»[5], «...ԱԿՀՏ-ում գոյություն ունի բացարձակ հողային ռենտա այն բանի շնորհիվ, որ գոյություն ունի հողի մասնավոր սեփականություն։ Սա կապիտալիստական բացարձակ ռենտա չէ, բայց բացարձակ հողային ռենտա է, որ առաջանում է հողի մասնավոր սեփականությունից»[6]։ Այս նույն միտքը հաստատել է հեղինակը հետո ևս, գրելով. «Հողի մասնավոր սեփականությունը ԱԿՀՏ-ում պայմանավորում է բացարձակ ռենտայի գոյությունը»[7]։ Նման օրինակներ կարելի է շատ բերել[8], ճիշտ է, բազմաթիվ վերապահություններ են արվում, ասվում է այն մասին, թե դա կերպափոխված բացարձակ ռենտա է և այլն։ Եթե առաջ հողի համար տրվող հատուցումը համարում էին կապիտալիստական տարր, շահագործման հարաբերությունների հետևանք, հավելյալ արժեքի մաս (այդ

---

[1] Տես Ե. Մատեևի հոդվածը, „Ново време", София, 1948, № 10, էջ 864։

[2] Տես Պ. Ռուսևի հոդվածը, „Пропагандист и агитатор", София, 1954, № 2, էջ 63։

[3] Տես Մ. Ռուսեենովի հոդվածը, „Народостопански архив", Свиштов, 1950, кн. 1, էջ 84—85։

[4] Տես Ա. Գեորգիևի հոդվածը, „Философска мисъл", София, 1951, № 1, էջ 112—113։

[5] „Известия на Икономическия и Правния институти (БАН). Серия икономическа. Кн. 1—2, София, 1953, էջ 108։

[6] Նույն տեղում, էջ 110։

[7] „Новая Болгария", София, 1954, № 1, էջ 8։

[8] Առանձնապես ջանում էին բուրժուական տնտեսագետները՝ Ցա. Մոլլովը, Կ. Բոբչևը, Ն. Դոլինսկին, Ս. Դեմոստենովը, Ա. Տոտևը, Ն. Կընևը, Կ. Կոլչևը և ուրիշները։ Երկրում ժողովրդա-դեմոկրատական կարգի հաստատումից հետո էլ նրանք շարունակում էին պրոպագանդել բուրժուական ու մանր-բուրժուական ագրարային թեորիաներ և ազդում էին պարտիական և ոչ պարտիական առանձին հեղինակների հայացքների վրա։

տեսակետին էր առաջ և Տ. Զերնոկոլևը), ապա հիմա գրում են այն մասին, թե ռենտան հավելյալ արժեքի մաս չէ, թե այդ կերպափոխված ռենտան ԱԿՀՏ-ում գյուղացիների կատարած կոլեկտիվ աշխատանքի հետևանք է։ Բայց այս բոլոր վերապահությունները հարցը չեն սպառում, ավելի ճիշտ՝ չեն վերացնում իրական սխալը[1]։

Իրև կանոն, ինչպես հիշատակված, այնպես և ռենտայի մասին գրող բոլոր մյուս հեղինակների համար ընդհանուր է այն, որ իբր թե բացարձակ հողային ռենտան ծնունդ է առնում հողի մասնավոր սեփականությունից։ Ուստի և այնտեղ, ուր գոյություն ունի հողի մասնավոր սեփականություն, անկախ հասարակարգից, կա և բացարձակ հողային ռենտա, լինի այդ կապիտալիստական թե ժողովրդա-դեմոկրատական հասարակարգ, լինի այդ մենատնտես աշխատավորական տնտեսություն, թե ԱԿՀՏ-ում միավորված աշխատավորական գյուղացիական տնտեսություն։

Նման հայացքների հեղինակները հաճախ վկայակոչում են Կ. Մարքսին, մեջբերելով հետևյալ քաղվածքը «Կապիտալից»՝ «հողային ռենտան այստեղ այն տնտեսական ձևն է, որով հողային սեփականությունը տնտեսապես իրացվում է»[2]։ Այնպես է ստացվում, որ իբր ըստ Մարքսի հողային ռենտան հողի մասնավոր սեփականության հետևանք է։ Այսպիսի ըմբռնումը բացահայտորեն սխալ է։ Մարքսը հողային ռենտան բխեցնում է երկակի մոնոպոլիայի առկայությունից. հողի՝ որպես տնտեսավարման օբյեկտի նկատմամբ եղած մոնոպոլիայից (դիֆերենցիալ ռենտա) և հողի՝ որպես մասնավոր սեփականության օբյեկտի նկատմամբ եղած մոնոպոլիայից (բացարձակ ռենտա)։ Հետևաբար, խոսելով հողային սեփականության մասին, Մարքսը նկատի ունի հողային սեփականության մոնոպոլիան, և ոչ թե հողային սեփականությունն առհասարակ։

Հողի մասնավոր սեփականության մոնոպոլիան անհրաժեշտաբար ենթադրում է խոշոր կապիտալիստական սեփականություն, կապիտալի մոնոպոլիա։ Մասնավոր սեփականության մոնոպոլիան խանգարում է կապիտալի ազատ կիրառմանը, ազատ կոնկուրենցիային, կապիտալի ազատ ներհոսմանը գյուղատնտեսության մեջ այլ ճյուղերից և շահույթի միջին նորմայի հավասարեցմանը հողագործական և ոչ հողագործական ձեռնարկությունների միջև։ Հողի մասնավոր սեփականության մոնոպոլիան դանդաղեցնում է տեխնիկայի ներդրումը, արգելակում հասարակական արտադրողական ուժերի զարգացումը գյուղատնտեսության մեջ, որն իր հերթին արտահայտվում է կապիտալի ցածր օրգանական կառուցվածքով՝ կապիտալի միջին օրգանական կառուցվածքի համեմատությամբ արդյունաբերության մեջ։

---

[1] Կերպափոխված ռենտայի մասին վերապահությունը առանձին հեղինակներին չի խանգարել ռենտայի մեջ այնուամենայնիվ տեսնել շահագործման հարաբերությունների արտահայտություն։ Այսպես Մլադեն Դիմիտրովը գրել է. «Քանի որ ռենտան անաշխատ եկամուտ է, բացահայտ շահագործողական բնույթ ունի, ուստի կարող է դիտվել որպես կերպափոխվող բացարձակ ռենտա։ Ռենտան սովորաբար այն առանձնահատկությունն ունի, որ գանձվում է և՛ մանր, և՛ միջին, և՛ ունևոր գյուղացիներից, որի հետևանքով ռենտան «ինքնաշահագործողական» բնույթ ունի» (Годишник на селскостопанска академия „Г. Димитров", София, 1951, էջ 254)։

[2] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, մաս II, Երևան, 1949, էջ 162։

Հողի մասնավոր սեփականության մոնոպոլիայի տնտեսական իրացումը խոշոր հողատերերի կողմից հավելյալ արժեքի մի մասի յուրացումն է որպես արժեքի հավելում հասարակական արտադրության գնի նկատմամբ, կամ, որ միևնույնն է, շահույթի հավելումը միջին շահույթի նկատմամբ։

Հանդես գալով 1905—1907 թթ. ռուսական առաջին ռևոլյուցիայում բոլշևիկների ագրարային ծրագրի պաշտպանությամբ մենշևիկների դեմ մղվող պայքարում, Լենինը տվել է ագրարային ծրագրի հիմնավորման, ռևոլյուցիոն թեորիայի կիրառման փայլուն օրինակ։ Մերկացնելով մենշևիկ Մասլովի թեորիական ճիգերի թշվառությունը և պաշտպանելով Մարքսի ուսմունքը ռենտայի և մասնավորապես բացարձակ ռենտայի մասին, Լենինը գրել է՝ «ճիշտ չէ, թե ըստ Մարքսի բացարձակ ռենտան ստացվում է հողագործական կապիտալի ցածր կազմի շնորհիվ։ Բացարձակ ռենտան ստացվում է շնորհիվ հողի մասնավոր սեփականության»[1]։

Բայց բացարձակ ռենտան ստեղծում է ոչ թե հողի մասնավոր սեփականությունը որպես այդպիսին։ Բացարձակ ռենտայի առկայությունը ենթադրում է հողի մասնավոր սեփականության առկայությունը, մինչդեռ հողի մասնավոր սեփականությունը չի ենթադրում բացարձակ ռենտայի առկայությունը։ «Հողի սոսկ իրավաբանական սեփականությունը հողային ռենտա չի ստեղծում սեփականատիրոջ համար»[2]։ Հողի մասնավոր սեփականությունը միայն այն ժամանակ է բերում բացարձակ ռենտայի գոյության հնարավորությանը, երբ հողի մասնավոր սեփականությունը վեր է ածվել խոշոր մասնավոր սեփականության, մասնավոր սեփականության մոնոպոլիայի, «...բացարձակ ռենտային ծնունդ է տալիս... հողի մասնավոր սեփականության մոնոպոլիան»[3]։ Բացարձակ ռենտան հարաբերություն է հողատիրոջ և կապիտալիստական ֆերմերի միջև գյուղատնտեսական բանվորների շահագործման հիման վրա, այլ խոսքով «ռենտան ենթադրում է հողագործության բուրժուական կազմակերպում, այսինքն, առաջին, նրա կատարյալ ենթարկումը շուկային, և, երկրորդ, հողագործության մեջ բուրժուազիայի և պրոլետարիատի նույնպիսի դասակարգերի գոյությունը, որոնք հատուկ են նաև կապիտալիստական ինդուստրիային»[4]։ Հենց այն պատճառով, որ բացարձակ ռենտան ենթադրում է հողագործության բուրժուական կազմակերպում, բացարձակ ռենտա չկա մանր գյուղացիական տնտեսության մեջ, որն աշխատում է գլխավորապես իր կարիքները հոգալու համար, ինչպես այդ ցույց է տվել Մարքսը։ Բացարձակ ռենտան կապիտալիստական արտադրության եղանակի կատեգորիա է, թեկուզ և կարող է վերացվել ոչ միայն առանց կապիտալիզմին վնասելու, այլև կապիտալիստական արտադրության, կապիտալիստական արտադրական հարաբերությունների զարգացման օգտին։ Ուստի Լենինը, մատնանշելով բացարձակ ռենտայի կապը գյուղատնտեսական արտադրության կապիտալիստական կազմակերպման հետ, հողի մասնավոր սեփականության մոնոպոլիան համարում է ոչկապիտալիստական մոնոպոլիա, որը խանգարում է շահույթը

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 380։
2 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, մաս II, Երևան, 1949, էջ 294։
3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 381—382։
4 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. I, էջ 547։

ազատ հավասարեցմանը, ազատ կոնկուրենցիային և կապիտալի ազատ շարժմանը մի ճյուղից մյուսը։ Կապիտալիզմը կարող է զարգանալ և՛ համայնական, և՛ ազգայնացված հողի վրա։ Բայց հողի մասնավոր սեփականության մոնոպոլիան սոկա է. ձեռնարկելով կապիտալիզմի սգրարային հարաբերությունների ուսումնասիրությանը «Մարքսը վերցնում է կապիտալիստական հողագործությունը, որը նեղված է ոչ-կապիտալիստական մասնավոր սեփականությամբ»,—մատնանշում էր Լենինը։

Այսպիսով, բացարձակ ռենտան ոչ թե առհասարակ հողի մասնավոր սեփականության հետևանք է, այլ արտադրության կապիտալիստական եղանակով պայմանավորված հողային սեփականության հատուկ ձևի հետևանք։ Հողի մասնավոր սեփականության մոնոպոլիան հողի մասնավոր սեփականության յուրահատուկ պատմական ձև է, որ գոյացել է ֆեոդալական ու մանր գյուղացիական հողային սեփականության վրա կապիտալիստական արտադրության եղանակի ազդեցությամբ և հանգեցրել է բացարձակ ռենտայի գոյության հնարավորությանը ոչ թե իրավաբանական սեփականության, այլ տնտեսական այն պայմանների շնորհիվ, որոնք միջին շահույթի նկատմամբ հավելյալ արժեքի հավելուրդը գնում են հողի խոշոր սեփականատիրոջ տրամադրության տակ։ Հողային սեփականության պատմական այդ յուրահատուկ, այսինքն կապիտալիստական ձևը ենթադրում է գյուղական բանվորների սեփականազրկումը հողից և նրանց ենթարկումը կապիտալին։ Կապիտալիստական արտադրության եղանակը գյուղատնտեսության մեջ և նրան համապատասխանող հողային սեփականության ձևը մարքսիզմը քննարկում է որպես պատմական և ոչ հավերժական կատեգորիա։

Հողի մասնավոր սեփականության մոնոպոլիան ենթադրում է խոշոր կապիտալիստական մասնավոր սեփականություն, հողը ազատ տնօրինելու իրավունք, կուզենա՝ կօգտագործի հողագործության կամ այլ նպատակների համար, կուզենա՝ վարձակալության կտա կամ պարապ կթողնի։

Բացարձակ ռենտայի վերը հիշված նախադրյալներն ու պայմանները գոյություն չունեն Բուլղարիայի Ժողովրդական Ռեսպուբլիկայում։

Ագրարային ռեֆորմի հետևանքով վերացվել է խոշոր հողային սեփականությունը և դրանով իսկ վերացվել է հողի մասնավոր սեփականության մոնոպոլիան։ Հողը մասամբ տրվել է հողազուրկ ու սակավահող գյուղացիներին որպես աշխատանքային սեփականություն, մասամբ ազգայնացվել ու տրվել է ԱԿՀՏ-ներում միավորված գյուղացիներին և այլ կազմակերպություններին։

Ագրարային ռեֆորմի՝ «Հողը պատկանում է նրան, ով այն մշակում է» սկզբունքը ապահովվել է ոչ միայն հողի բաժանքով, այլև ռեֆորմի սկզբունքը իրացնելու համար արտադրական աճող օգնության կազմակերպումով։ Մասնավոր այն հողատերերը, որոնք ԱԿՀՏ-ների անդամ չեն, կարող էին իրենց հողը վարձակալության տալ կարիքավոր գյուղացիներին իշխանության տեղական մարմինների կողմից սահմանված վարձավճարով։ Հող վարձակալել կարելի է տվյալ բնակավայրի համար համայն-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 382։

քային հանձնաժողովի կողմից սահմանված միջին տնտեսության սահմաններում։ Կառավարության որոշումները պարտավորեցնում էին կատարել ցանքի պլանները (այդ պլանները համայնքի ժողովում քննարկելուց հետո տեղական ժողովրդական խորհուրդների կողմից հասցվում էին բոլոր ԱԿՀՏ-ներին ու մենատնտես գյուղացիներին)։ Հարկավոր էր ապահովել ցանքի պլանների կատարումը բոլոր հողամասերի վրա։ Իսկ Բուլգարիայի շատ գյուղացիներ հողաճոթեր ունեին իրենց մշտական բնակավայրից դուրս, տվյալ ոկոլիայի (գավառի) ուրիշ գյուղերի կամ նույնիսկ ուրիշ ոկոլիաների հողային մասսիվներում, որոնք կոչվում էին պարակենդենտային հողամասեր։ Հողատերը պարտավոր էր ապահովել ցանքի պլանի կատարումը նաև պարակենդենտային հողերի վրա։ Տեղական խորհուրդները պարտավոր էին չցանված հողը մեկ տարով վարձակալության տալու ԱԿՀՏ-ին, չքավոր ու միջակ գյուղացիներին կամ հասարակական կազմակերպություններին պետական հողային ֆոնդի սահմանած տարիֆներով[1]։

Հողի մասնավոր սեփականության իրավունքը թույլատրում է հողը վաճառելու իրավունք, բայց հողային ռեֆորմի օրենքով սահմանափակվում են հողի կենտրոնացման չափերը հողային սեփականության մաքսիմումի նորմաներով (20—30 հեկտար)։ Կուլակային վերնախավը մի շարք միջոցառումների կիրառման հետևանքով (պրոգրեսիվ հարկ, միանվագ հարկ, գյուղատնտեսական խոշոր գույքի հարկադիր հետգնում և այլն) զրկված էր տնտեսական այն դերից, որ նա ուներ սկզբում։

Կապիտալիզմի պայմաններում բացարձակ ռենտան գնագոյացման գործոն է։ Հողի մասնավոր սեփականության մոնոպոլիան հնարավորություն է տալիս գյուղատնտեսական մթերքների գները պահպանելու բարձր մակարդակի վրա և յուրացնելու արժեքի ու արտադրության գնի միջև եղած տարբերությունը որպես բացարձակ ռենտա։ Բացարձակ ռենտան տուրք է ամբողջ հասարակության վրա գյուղատնտեսական մթերքների գների վրա կատարվող հավելումների ձևով։ Գների այդպիսի թանկացումը ենթադրում է շուկայական հարաբերությունների, շուկայական տարերքի տիրապետությունը։ Այդ թանկացումը ապահովված եկամտի ու հարստության աղբյուր է խոշոր հողատերերի համար սպառողների, և առաջին հերթին աշխատավորների լայն մասսաների, հաշվին։

Ժողովրդա-դեմոկրատական կարգի պայմաններում, երբ առևտուրը կենտրոնացված է պետական ու կոոպերատիվ առևտրի սիստեմում (կազմակերպված շուկա), գները կարգավորվում են պետության կողմից պլանաչափորեն զարգացող տնտեսության տնտեսական օրենքների պահանջների հաշվառումով, ժողովրդական մասսաների նյութական ու կուլտուրական կենսամակարդակը բարձրացնելու շահերին համապատասխան, հետևապես, չկա բացարձակ ռենտա, որպես գնագոյացման գործոն։

Կուլակա-կապիտալիստական տարրերի նյութական վիճակը վատթարացել է ժողովրդա-դեմոկրատական կարգի հաստատումից հետո. նրանցից խլվել են ուրիշի աշխատանքը շահագործելու հնարավորությունները. պետական պարտավորությունների, գների ու հարկային քաղաքականության

---

[1] Տես «Сборник на по-важните постановления и разпореждания на Министерския съвет на НР България», София, 1950, էջ 87 և 461։

միջոցով ժողովրդական իշխանությունը վերացրել է կուլակների անտեսական ուժը,— գրում է Բուլգարական կոմպարտիայի կենտկոմի օրգանը[1]։

Այս բոլոր միջոցառումները միասին վերցրած ժողովրդա-դեմոկրատական կարգի պայմաններում, երբ արտադրության հիմնական միջոցները համաժողովրդական ունեցվածք են կազմում, վերացրել են հողագործության բուրժուական կազմակերպման գոյության հիմքը, բացարձակ ռենտայի հիմքը։

ԱԿՀՏ-ի անդամները պահպանում են հողի մասնավոր սեփականության իրավունքը, որը տնտեսապես իրացվում է հողի համար հատուցում ստանալու մեջ։ Բայց այստեղ հողի մասնավոր մոնոպոլիայի ոչ մի հետք չկա։ ԱԿՀՏ-ում չկա վարձու աշխատանք, չկա հավելյալ արժեք։ Գյուղատնտեսական արտադրանքի գները որոշվում են ոչ թե արժեքի օրենքի տարերային գործողությամբ, այլ կարգավորվում են պետության կողմից արժեքի օրենքի օգտագործումով։ Բուլգարիայի Ժողովրդական Ռեսպուբլիկայում չի գործում շահույթի միջին նորմայի օրենքը և հողի համար տրվող հատուցումը միջին շահույթի մակարդակը գերազանցող հավելյալ արժեքի մաս չէ։

ԱԿՀՏ-ի անդամները չեն կարող իրենց հողը վարձակալության տալ, իսկ հողը վաճառել կարող են կամ ԱԿՀՏ-ին, կամ ԱԿՀՏ-ի անդամներին։

Այն պնդումները, թե ԱԿՀՏ-ում պահպանվում է հողի մասնավոր սեփականությունը, իսկ մասնավոր սեփականությունը առաջացնում է բացարձակ ռենտա, չի բխում մարքսիզմ-լենինիզմի ուսմունքից բացարձակ ռենտայի մասին, չի համապատասխանում իրերի օբյեկտիվ վիճակին։

Հողի մասնավոր սեփականության իրավունքի գոյությունը ԱԿՀՏ-ի պայմաններում չի խոչընդոտում կապիտալ ներդրումների աճմանը գյուղատնտեսության մեջ պետության և իրենց՝ ԱԿՀՏ-ների կողմից, ԱԿՀՏ-ների անբաժանելի ու հասարակական այլ ֆոնդերի աճմանը, տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունների աճմանը։ Ֆաշիստական լծից ազատագրվելուց հետո անցած տասներեք տարիների ընթացքում Բուլգարիայի գյուղատնտեսությունը հսկայական քայլեր է կատարել իր զարգացման ասպարեզում, որի մասին աշխատավոր գյուղացիությունը նախկինում երազել անգամ չէր կարող։ Առ սույն թվականի մարտի 1-ը ԱԿՀՏ-ները միավորում էին գյուղական տնտեսությունների և մշակվող հողի 80 տոկոսը։ Երկրի հացահատիկային ու հարթավայրային շրջաններում կոոպերացումը հիմնականում ավարտված է։ Գյուղատնտեսական աշխատանքների 70 տոկոսից ավելին մեքենայացված է ՄՏ կայանների միջոցով, որոնք հանդիսանում են կոոպերատիվ տնտեսությունների ինդուստրիալ նյութական-տեխնիկական բազան։ ՄՏԿ-ները կենտրոնացնում են 26000 պայմանական տրակտոր, 4250 կոմբայն, հազարավոր բեռնատար ավտոմեքենաներ ու գյուղատնտեսական այլ մեքենաներ։ 1957 թ. 208 ՄՏԿ-ները կատարելու են 10,13 միլիոն հեկտար փափուկ վարի վերածած աշխատանք։ Պետությունը ֆինանսական աճող օգնություն է ցույց տալիս գյուղատնտեսությանը։ Պետական օգնությամբ ու ԱԿՀՏ-ների միջոցներով արդեն կառուցվել են ավելի քան 35000 գյուղատնտեսական շենքեր և շուրջ 900 փոքր-ջրամբարներ ու

---

[1] Տես „Работническо дело", София, 5 սեպտեմբերի 1956 թ. № 249-ում զետեղված խմբագրականը։

լճակներ։ ԱԿՀՏ-ները տնկել են 44000 հեկտար խաղողի և 40000 հեկտար մրգատու այգի։ 1957 թ. գյուղատնտեսության ֆինանսավորմանը հատկացվելու է 3874 միլիոն լև, որից միայն 74 միլիոն լևը ԱԿՀՏ-ների սեփական միջոցների հաշվին։ 1956 թ. ԱԿՀՏ-ները տվել են երկրում ստացված հացահատիկայիններով 74, բամբակի 90, շաքարի ճակնդեղի 94,2 տոկոսը, մնացած տեխնիկական կուլտուրաների մեծ մասը։ ԱԿՀՏ-ները պարենի ու արդյունաբերության համար գյուղատնտեսական հումքի հիմնական մատակարարողներն են։ Չնայած 1956 թ. կլիմայական անբարենպաստ պայմաններին (երաշտն ու կարկտահարությունը զգալի տարածությունների վրա) մեկ աշխօրի միջին եկամուտը երկրում կազմել է 12,42 լև։ Այն ավելի բարձր է եղել ինտենսիվ կուլտուրաների շրջաններում։ Վերջին հինգ տարիների ընթացքում կոոպերատորների եկամուտներն աճել են 60 տոկոսով։ Բազմաթիվ կոոպերատորներ, այդ թվում նաև նախկին բատրակներ ու չքավորներ, կառուցել են նոր, հիանալի բնակարաններ։ 1957 թ. սկզբից 60 տարեկանից բարձր տղամարդ և 55 տարեկանից բարձր կին կոոպերատորները ստանում են կենսաթոշակ ամսական 60-ից մինչև 150 լև դումարով։

ԱԿՀՏ-ում չկա հողի մասնավոր սեփականության յուրահատուկ կապիտալիստական ձև, չկա հողի մասնավոր սեփականության մոնոպոլիա, չկան շահագործման հարաբերություններ, ուստի և հողի ոչկապիտալիստական մասնավոր սեփականության իրավունքի տնտեսական իրացումը չի կարելի բացարձակ ռենտա համարել։ Ինչպես ասված է վերը, վերապահությունները այն մասին, թե դա կերպափոխված բացարձակ ռենտա է, որ առաջանում է ոչ հավելյալ արժեքից և այլն, չեն փոխում հարցի սկզբունքային քաղաքատնտեսական էությունը[1]։

Հողի հատուցման՝ ռենտայի բնույթի ճիշտ ըմբռնումը ունի ոչ միայն գիտական-թեորիական, այլ և պրակտիկ հետաքրքրություն։ Ռենտայի բնույթի ճիշտ ըմբռնումը սերտորեն առնչվում է ԱԿՀՏ-ի՝ որպես գյուղատնտեսության կազմակերպման սոցիալիստական ձևի էության հարցի ըմբռնման հետ։

Սխալ բնորոշելով հողի՝ որպես արտադրության միջոցներից մեկի համար տրվող հատուցման բնույթը, դիտելով այն որպես բացարձակ ռենտա, թեկուզ և վերապահություններով, կատարվում է, իրական կյանքին չհամապատասխանող, սխալ հետևություն այն մասին, թե հողի մասնավոր սեփականության իրավունքի գոյությունը Բուլղարական Ժողովրդական Ռեսպուբլիկայի պայմաններում արգելակում է, լրացուցիչ դժվարություններ է ստեղծում մանր գյուղացիական տնտեսությունները խոշոր սոցիալիստական տնտեսությունների ռելսերին փոխադրելու գործում, դժվարու-

---

[1] Սովետական գրականության մեջ առաջին անգամ ճիշտ բացատրությունն այն մասին, որ ժողովրդա-դեմոկրատական երկրներում հողի համար տրվող ռենտան բացարձակ ռենտա չէ, տրված է Ա. Պետրուշովի „Социалистическое строительство в сельском хозяйстве европейских стран народной демократии", М., 1951, գրքում։

1956 թ. հրատարակած իր „Земельная рента при капитализме" գրքում Ի. Ի. Կոգոդոնը իրավացիորեն նշում է, որ ժողովրդա-դեմոկրատական երկրներում բացարձակ ռենտան վերացված է, թեկուզ և սխալմամբ կարծում է, թե այդ երկրներում հողը չի կարող գնվել, վաճառվել, վարձակալության տրվել, շնորհվել (էջ 124, 125)։

թյուններ է ստեղծում բուլղարական գյուղում սոցիալիզմ կառուցելու գործում, դժվարացնում է ԱԿՀՏ-ների զարգացումն ու ամրապնդումը[1]։

Իրականում, այն երկրների համար, որտեղ հողի մասնավոր սեփականության տրադիցիան խորն է արմատակալել, կոմունիստական ու բանվորական պարտիաները, ինչպես սովորեցրել է Լենինը, միանգամից առաջ չքաշելով ամբողջ հողի ազգայնացման լոզունգը, իշխանությունը բանվոր դասակարգի և գյուղացիության ձեռքն անցնելուց հետո պետք է գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցմանն անցնեն հողի մասնավոր սեփականության իրավունքի պահպանման պայմաններում։ Հետևաբար, այդ առանձնահատկությունը հաշվի առնող կոմունիստական ու բանվորական պարտիաների ճիշտ, շրջահայաց քաղաքականությունը միայն կարագացնի սոցիալիզմի շինարարության գործը գյուղատնտեսության մեջ։ ԱԿՀՏ-ների զարգացումը դրա փայլուն ապացույցն է։ Բուլղարիայի կոմունիստական պարտիան ուշագիր կերպով հետևել է ոչ միայն մանր գյուղացիական տընտեսությունների կոոպերացման ընթացքում կամավորության սկզբունքը անպայման պահպանելուն, այլև հողի համար տրվող հատուցման՝ ռենտայի չափի կամավոր նվազմանը։ ԱԿՀՏ-ի օրինակելի կանոնագրության փոփոխությունները առաջ չեն անցել ռենտայի նվազեցման ասպարեզում եղած նվաճումներից, այլ օրինականացրել են այն, ինչ գործնականում արդեն նվաճված էր։ Այլ կերպ ասած, եկամտի որոշ մասը ըստ ԱԿՀՏ-ին հանձնած հողի տարածության ու որակի բաշխելու ձևով հողի մասնավոր սեփականության իրավունքի իրացման ասպարեզում վարած ճիշտ քաղաքականությունը ԱԿՀՏ-ների զարգացման որոշ ժամանակաշրջանի համար նպաստող գործոն է։ Հողի համար տրվող ռենտան նպաստելով ԱԿՀՏ-ի զարգացմանն ու ամրապնդմանը, հանգեցնելու է ռենտայի վերացմանը ԱԿՀՏ-ի անդամների մանր սեփականատիրական հոգեբանության հաղթահարման հետևանքով։

Հողի հանձնումը աշխատավոր գյուղացիներին որպես մասնավոր սեփականություն և հողի մասնակի ազգայնացումը Բուլղարիայի Ժողովրդական Ռեսպուբլիկայում նպաստել է բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության դաշինքի ամրապնդմանը, ԱԿՀՏ-ների շինարարության զարգացմանը, ինչպես Սովետական Միության պայմաններում դրան նպաստել է ամբողջ հողի ազգայնացումը։ ԱԿՀՏ-ների զարգացման տվյալ ժամանակաշրջանում եկամուտների մի մասի բաշխումը ըստ հողի, այդ մասի բացարձակապես կամավոր նվազեցումը, իսկ այնուհետև նաև վերացումը չի արգելակում, այլ, ընդհակառակը, նպաստում է ԱԿՀՏ-ների զարգացմանը։ Ռենտայի հարցը պետք է քննարկել ոչ թե նեղ տնտեսագիտական առումով, այլ Բուլղարիայում սոցիալիզմի կառուցման ու նրա հեռանկարների տեսանկյունով։ Այս հարցերի այլ լուծումը մեզ թվում է դոգմատիկ, սոցիալական կյանքի երևույթների նկատմամբ ոչպատմական մոտեցման դրսևորում։

Հայտնի է, որ 1919 թ. Հունգարական Սովետական Ռեսպուբլիկայի

---

[1] Տես Ն. Մատևի հոդվածը, „Ново време" София, 1948, № 10, էջ 871։ Ա. Գեորգիևի հոդվածը, „Философска мисъл", София, 1951, № 1, էջ 112։

պարտության պատճառներից մեկն այն էր, որ Հունգարիայի երիտասարդ կոմունիստական պարտիան այն ժամանակ դեռ չէր հասկանում աշխատավոր գյուղացիության հետ բանվոր դասակարգի սերտ դաշինքի նշանակությունը կոնտրռևոլյուցիայի դեմ պայքարելու, նոր իշխանությունը ամրապնդելու գործում։ Հունգարական կոմունիստական պարտիան բանվոր դասակարգի դաշնակից էր համարում միայն գյուղատնտեսական պրոլետարիատը, իսկ գյուղացիության նկատմամբ ամբողջությամբ վերցրած չեզոքացման գիծ էր վարում։ 1919 թվականի ապրիլի 3-ի օրենքով 100 խոլդից (57 հեկտարից) ավելի կենդանի ու անկենդան ինվենտարով կոնֆիսկացված հողը չբաժանվեց սակավահող գյուղացիներին, որոնք հող էին տենչում, ուզում էին ավելացնել իրենց հողատարածությունները, տնտեսապես ամրապնդել իրենց վիճակը։ Կոնֆիսկացված հողերը դարձնում էին «արտադրական կոոպերատիվներ»—պետական խոշոր տնտեսություններ։ Հունգարական կոմունիստները նեղ առումով էին քննարկում ագրարային հարցը, որպես զուտ տնտեսական հարց, և ոչ որպես պրոլետարական ռևոլյուցիայի ստրատեգիայի հարց։ Հունգարական սովետական իշխանությունից հող ստանալու իրենց սպասելիքների մեջ հուսախաբված աշխատավոր գյուղացիությունը չդարձավ պրոլետարիատի դաշնակիցը։ Այդ հեշտացրեց կոնտրռևոլյուցիայի հաղթանակը։ Դաշինքը աշխատավոր գյուղացիության հետ ամրապնդելու համար բանվոր դասակարգը պետք է հասկանա գյուղացիության տենչը և աջակցի այդ տենչի բավարարմանը, ճիշտ որոշելով իր քաղաքականությունը, աշխատավոր գյուղացիության շահերը զուգակցելով նոր սոցիալիստական հասարակարգի կառուցման հետ։ Հունգարական սովետական իշխանության պարտությունից անհրաժեշտ հետևություններ են կատարել բոլոր երկրների կոմունիստական ու բանվորական պարտիաները, այդ թվում և Բուլղարական կոմունիստական պարտիան, որը նշանակալից արդյունքների է հասել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ասպարեզում։

Հողի համար տրվող հատուցումը սերտորեն կապված է հողի ռևոլյուցիոն բաժանքի հարցի հետ, գյուղացիների հող ստանալու հետ բանվոր դասակարգի ձեռքից, բանվոր դասակարգի մարտական դաշինքը գյուղացիության աշխատավոր մասսաների հետ ամրապնդելու հետ։ Հողի ռևոլյուցիոն բաժանքը ժողովրդա-դեմոկրատական կարգի պայմաններում սոցիալիստական ռևոլյուցիայի ստրատեգիայի հարց է։ Այսպիսի պայմաններում հողի բաժանքը ձեռք է բերում որակական ու սկզբունքային նոր բովանդակություն, ի տարբերություն հողի բաժանքից բուրժուական կարգի պայմաններում, հանդիսանում է սոցիալիզմի կառուցմանը նպաստող գործոն, քայլ է դեպի սոցիալիզմը, ինչպես ամբողջ հողի ազգայնացումը Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո Սովետական Միությունում քայլ էր դեպի սոցիալիզմը և դյուրացրեց կոլտնտեսային շինարարության հաղթանակի գործը։ Այս տեսակետից ընդհանուր շատ բան կա Սովետական Միությունում հողի ազգայնացման ու ժողովրդա-դեմոկրատական կարգի պայմաններում իրականացված հողի ռևոլյուցիոն բաժանքի միջև։ Հողի բաժանքը Բուլղարիայի Ժողովրդական Ռեսպուբլիկայում ամբողջովին համապատասխա-

նում է սոցիալիզմի կառուցման ուղիների մասին լենինիզմի ուսմունքին և ներկայացնում է պատմական նոր պայմաններում, Ռուսաստանից տարբեր ազգարային հարաբերությունների պարագայում, այդ ուսմունքի ստեղծագործական կիրառման ու զարգացման օրինակ։